ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 484-Ա

ԼԵՎՈՆ ՍԱՄՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ***որոշում եմ.***

1. 2018 թվականի նոյեմբերի 28-ին կայացած մրցույթում հաղթող ճանաչված Լևոն Սամվելի Հարությունյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի (ծածկագիր 2.1-2) պաշտոնում 2018 թվականի նոյեմբերի 29-ից, երեք ամիս փորձաշրջանով:

2. Վարձատրությունը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 485-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարգարիտա Օնիկի Գասպարյանի (ծնված՝ 1959 թվականի ապրիլի 20-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 13-րդ թաղամասի թիվ 21 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) N 2522544 վկայական, տրված 2008 թվականի հոկտեմբերի 23-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2018 թվականի նոյեմբերի 26-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Մարգարիտա Օնիկի Գասպարյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 13-րդ թաղամասի թիվ 21 հասցեի այգեգործական հողամասում 2010 թվականին ինքնակամ կառուցել է պարիսպ՝ 2,2 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Մարգարիտա Օնիկի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 13-րդ թաղամասի թիվ 21 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, պարիսպը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Մարգարիտա Օնիկի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 13-րդ թաղամասի թիվ 21 այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 3 432 (երեք հազար չորս հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը:

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 486-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33, 34-րդ կետերով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30 և 48-րդ կետերով, հիմք ընդունելով Ձորաղբյուր համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 2-ի թիվ 19-Ն որոշումը և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Պավել Սերգեյի Ղալթախչյանի կողմից (ծնված 1950 թվականի հունվարի 8-ին) Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 3-րդ զանգվածի 3-րդ թաղամասի թիվ 89 հասցեի հողակտորի հարևանությամբ, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 158,14 քառ.մետր մակերեսով հողակտորում ինքնակամ կառուցված թիվ 1 ծածկի՝ 11,26 քառ.մետր և թիվ 2, 3, 4, 5 պարիսպի՝ 9,7 քառ.մետր արտաքին մակերեսով և ինքնակամ տեղադրված դարպասի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 3-րդ զանգվածի 3-րդ թաղամասի թիվ 89 հասցեի հողակտորի հարևանությամբ, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 158,14 քառ.մետր մակերեսով հողակտորում ինքնակամ կառուցված թիվ 1 ծածկը՝ 11,26 քառ.մետր և թիվ 2, 3, 4, 5 պարիսպը՝ 9,7 քառ.մետր արտաքին մակերեսներով և ինքնակամ տեղադրված դարպասը համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը (կցվում են հողամասի և շինությունների հատակագծերը):

2. Համայնքային սեփականության իրավունքը ճանաչված գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, Ձորաղբյուր 3-րդ զանգված, 3-րդ թաղամաս, թիվ 89/1:

3. Դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 3-րդ զանգված, 3-րդ թաղամաս, թիվ 89/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցը ձեռք բերելու նպատակով գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած անձ՝ Պավել Սերգեյի Ղալթախչյանի

5. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 487-Ա

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 26-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 37-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշման պահանջներով, ***որոշում եմ.***

1.Ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող Ջրվեժի համայնքային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով.

Սանթրոսյան Նորայր - համայնքի ղեկավարի օգնական (հանձնաժողովի նախագահ),

Մարգարյան Անահիտ - ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ,

Կարապետյան Կորյուն – Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար,

Գևորգյան Նորիկ – Ջովք գյուղի վարչական ղեկավար,

Անտոնյան Սուսաննա - աշխատակազմի առաջին կարգի մասնագետ,

Արտակարգ իրավիճակների ներկայացուցիչ,

Առողջապահության ներկայացուցիչ:

2. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2012 թվականի մարտի 14-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 26-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 488-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 183-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, ***որոշում եմ՝***

1.Ստեղծել՝

1)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի բնակչության տարահանման հանձնաժողով՝ համաձայն N 1 հավելվածի.

2)հանձնաժողովի կազմում աշխատանքային խմբեր՝ համաձայն N 2 հավելվածի:

2.Հաստատել հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

3.Ջրվեժի միջնակարգ դպրոցի բազայի վրա (մասնաշենք N 1) ստեղծել տարահանման (ընդունման) հավաքակայան, որի պետը ի պաշտոնե համարել դպրոցի տնօրենին:

4.Ջրվեժի միջնակարգ դպրոցի բազայի վրա (մասնաշենք N 2) ստեղծել երկարատև բնակության կետ, որի պետը ի պաշտոնե համարել դպրոցի փոխտնօրենին:

5.Տարահանման (ընդունման) հավաքակայանի պետին՝ համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել հավաքակայանի և երկարատև բնակության կետի անձնակազմի պարտականությունները՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ:

6.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» N 183-Ա որոշումը:

7.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Գարեգին Բաղալյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 489-Ա

ԽԱԶԱԼ ՖԱՏՈՅԻ ՌԶԳՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 9-Ա որոշումը և համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի 4-րդ փակուղու թիվ 4 հասցեի բնակիչ Խազալ Ֆատոյի Ռզգոյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը բաղկացած է 7 անձից, ներկայումս ոչ ոք չի աշխատում, նրանց խնամքի տակ են 3 անչափահաս երեխաները՝ ծնված 2007, 2009 և 2012 թվականներին, ընդ որում՝ 2009 թվականին ծնված Գյոզալ Հուսիկի Ասոյանի մոտ առկա է աչքի շլություն և կարիք ունի բուժման և ելնելով ընտանիքի սոցիալական վիճակից Խազալ Ֆատոյի Ռզգոյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Խազալ Ֆատոյի Ռզգոյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 490-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի ԹԻՎ 43-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 8-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1180-Ն որոշման 52-րդ կետի պահանջների, ***որոշում եմ՝***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի բնակչության տարահանման պլանը, համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի բնակչության տարահանման պլանի կատարումն ապահովող փաստաթղթերը, համաձայն NN 2-12 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահին՝

1) յուրաքանչյուր տարի ճշտել համայնքի բնակչության տարահանման պլանը, մշտական հսկողություն իրականացնել համայնքում ստեղծված տարահանման մարմիններում անհրաժեշտ փաստաթղթերի առկայության և անձնակազմի համալրվածության ուղղությամբ:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2015 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի բնակչության տարահանման պլանը հաստատելու մասին» թիվ 43-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 491-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ***որոշում եմ՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի «Աղետների ռիսկի կառավարման պլանը»՝ համաձայն NN 1-12 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 492-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-Ի ԹԻՎ 42-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ համայնքի բնակչության պաշտպանությունը կազմակերպելու, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով, ***որոշում եմ՝***

1. Ստեղծել քաղաքացիական պաշտպանության համայնքային հետևյալ ծառայությունները.

1) Կապի և ազդարարման ծառայություն՝

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է Ջրվեժի փոստային բաժանմունքի պետը.

2) Բժշկական ծառայություն՝

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է «Ջրվեժի բժշկական ամբուլատորիա» ՊՓԲԸ-ի տնօրենը.

3) Ինժեներական և կոմունալ-տեխնիկական ծառայություն՝

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենը.

4) Տրանսպորտային ծառայություն՝

Ծառայության պետ՝ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետը.

5) Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն՝

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետը.

6) Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն՝

Ծառայության պետ՝ «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի համապատասխան մասնագետը.

7) Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն՝

Ծառայության պետ՝ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը.

8) Հասարակական կարգի պահպանման ծառայություն՝

Ծառայության պետ՝ Ջրվեժի միջնակարգ դպրոցի տնօրենը.

9) Բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն՝

Ծառայության պետ՝ համայնքի ավագանու անդամ:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2011 թվականի ապրիլի 22-ի «Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծելու մասին» թիվ 42-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» նոյեմբերի 2018 թվականի N 493-Ա

ՆԱՐԻՆԵ ԱՍՐԻՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Նարինե Վյաչեսլավի Ասրիյանի (ծնված՝ 1972 թվականի հոկտեմբերի 18-ին (նախկին ազգանունը՝ Խաչատուրովա, հիմք՝ ամուսնության վկայական ԱԱ N 005498, տրված 1996 հունվարի 24-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել ճանաչել իր սեփականության իրավունքը Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բանակի փողոցի թիվ 19 հասցեի, 07-042-0028-0001 կադաստրային համարի՝ իր կողմից փաստացի օգտագործվող 1000,0 քառ.մետր մակերեսով հողակտորի նկատմամբ (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի Աբովյանի տարածքային ներկայացուցչության կողմից 2018 թվականի նոյեմբերի 21-ին տրված արխիվային տեղեկանքը, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի հուլիսի 13-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղում Նարինե Վյաչեսլավի Ասրիյանի կողմից փաստացի օգտագործվող Բանակի փողոցի թիվ 19 հասցեի, 07-042-0028-0001 կադաստրային համարի հողամասի չափը կազմում է 1000,0 քառ.մետր:

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նարինե Վյաչեսլավի Ասրիյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ.***

1.Ճանաչել Նարինե Վյաչեսլավի Ասրիյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Բանակի փողոցի թիվ 19 հասցեի, 07-042-0028-0001 կադաստրային համարի՝ փաստացի օգտագործվող 1000,0 քառ.մետր մակերեսով հողակտորի նկատմամբ, որը նրա կողմից փաստացի օգտագործվել է նաև մինչև 2001 թվականի մայիսի 15-ը.

2.Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» դեկտեմբերի 2018 թվականի N 494-Ա

ԻՆՔԱՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լենա Արամի Խաչատրյանի (ծնված՝ 1940 թվականի նոյեմբերի 5-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 16-րդ թաղամասի թիվ 11, 12 և 22 հասցեի այգեգործական հողամասերում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) վկայական N 1111602, տրված 2004 թվականի օգոստոսի 30-ին, անհատ ձեռնարկատեր Սամվել Մկրտչյանի կողմից 2018 թվականի նոյեմբերի 26-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Սամվել Մկրտչյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Լենա Արամի Խաչատրյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 16-րդ թաղամասի թիվ 11, 12 և 22 հասցեի հողամասերում 2004-2009 թվականներին ինքնակամ կառուցել է այգետնակ՝ 178,08 քառ.մետր, հենապատ՝ 14,46 քառ.մետր, պարիապ՝ 8,38 քառ.մետր և օժանդակ շինություններ՝ 55,44 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Լենա Արամի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 16-րդ թաղամասի թիվ 11, 12 և 22 հասցեի այգեգործական հողակտորներում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Լենա Արամի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 16-րդ թաղամասի թիվ 11, 12 և 22 հասցեի այգեգործական հողամասերում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 585 125 (հինգ հարյուր ութսունհինգ հազար մեկ հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Կահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» դեկտեմբերի 2018 թվականի N 495-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ազատ Ռաշիդի Թոմասյանի (ծնված՝ 1957 թվականի նոյեմբերի 10-ին), Գոհար Աշոտի Սահակյանի (ծնված՝ 1956 թվականի նոյեմբերի 11-ին), Ալբերտ Ազատ Թոմասյանի (ծնված՝ 1980 թվականի օգոստոսի 14-ին), Ալեքսան Ազատի Թոմասյանի (ծնված՝ 1982 թվականի հունվարի 17-ին), Լուսինե Ազատի Թոմասյանի (ծնված՝ 1985 թվականի փետրվարի 26-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով ընտանիքին պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) վկայական N 721324, տրված 2001 թվականի մայիսի 18-ին, «Ա.Ռ.Մ. ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից տրված N 120/18 եզրակացությունը, տրված 2018 թվականի նոյեմբերի 15-ին, անհատ ձեռնարկատեր Արարատ Սողոմոնյանի կողմից 2018 թվականի նոյեմբերի 2-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Արարատ Սողոմոնյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ազատ Ռաշիդի Թոմասյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 2 հասցեի հողամասում 2016 թվականին ինքնակամ կառուցվել է երկհարկանի բնակելի տուն՝ 175,1 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Ազատ Ռաշիդի Թոմասյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, բնակելի տունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Ազատ Ռաշիդի Թոմասյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 455 260 (չորս հարյուր հիսունհինգ հազար երկու հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» դեկտեմբերի 2018 թվականի N 496-Ա

ԻՆՔԱՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գրետա Վոլոդյայի Գրիգորյանի (ծնված՝ 1951 թվականի հուլիսի 17-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2-րդ զանգվածի 46-րդ թաղամասի թիվ 4 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) վկայական N 0108134, տրված 1999 թվականի օգոստոսի 2-ին, անհատ ձեռնարկատեր Արմեն Բեկնազարյանի կողմից 2018 թվականի նոյեմբերի 19-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Արմեն Բեկնազարյանի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գրետա Վոլոդյայի Գրիգորյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2-րդ զանգվածի 46-րդ թաղամասի թիվ 4 հասցեի այգեգործական հողամասում 2009 թվականին ինքնակամ կառուցել է նկուղային հարկով երկհարկանի այգետնակ՝ 148,8 քառ.մետր և օժանդակ շինություններ՝ 6,1 քառ.մետր և 2,0 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գրետա Վոլոդյայի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2-րդ զանգվածի 46-րդ թաղամասի թիվ 4 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Գրետա Վոլոդյայի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 2-րդ զանգվածի 46-րդ թաղամասի թիվ 4 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված այգետնակը և օժանդակ շինությունները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 399 516 (երեք հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» դեկտեմբերի 2018 թվականի N 497-Ա

ԻՆՔԱՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արամ Տիգրանի Պետրոսյանի (ծնված՝ 1994 թվականի ապրիլի 12-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 39 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28092018-07-0007 վկայականը, տրված 2018 թվականի սեպտեմբերի 28-ին, «ՄԵԳԱՄԵՏՐ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի նոյեմբերի 20-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ՄԵԳԱՄԵՏՐ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արամ Տիգրանի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 39 հասցեի հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն՝ 385,8 քառ.մետր և պարիսպ՝ 4,0 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արամ Տիգրանի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 39 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված բնակելի տան և պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, բնակելի տունը և պարիսպը կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Արամ Տիգրանի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 39 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը և պարիսպը համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 1009 320 (մեկ միլիոն ինը հազար երեք հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2018 թվականի N 498-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ԹԻՎ 119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2017 թվականի հունիսի 21-ի «Շինարարության թույլտվություններ տալու մասին» թիվ 119-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3. Քաղաքացի Ալեքսանդր Ֆյոդորովիչ Շուբինին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 42-րդ փողոցի թիվ 12 հասցեի տնամերձ հողակտորում տալ երեք հարկանի բնակելի տան և օժանդակ շինությունների կառուցման շինարարության թույլտվություն:»:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2018 թվականի N 499-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Արիֆոն Ռադիկի Շահգելդյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0386-0007 կադաստրային համարի գյուղատնտեսական հողամասում տարածքի պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2018 թվականի N 500-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գոհար Օնիկի Ալոյանի (ծնված՝ 1951 թվականի հոկտեմբերի 1-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 3/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 2534052, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2007 թվականի դեկտեմբերի 17-ին, անհատ ձեռնարկատեր Տիգրան Փոթիկյանի կողմից 2018 թվականի նոյեմբերի 30-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Տիգրան Փոթիկյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գոհար Օնիկի Ալոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 3/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցվել է քարե պարիսպ՝ 24,42 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գոհար Օնիկի Ալոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 3/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, պարիսպը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Գոհար Օնիկի Ալոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 3/1 հասցեի տնամերձ ինքնակամ կառուցված պարիսպը համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 38 096 (երեսունութ հազար իննսունվեց դրամ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյան վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2018 թվականի N 501-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Արուս Սեյրանի Սիրադեղյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 19-րդ թաղամասի թիվ 7 հասցեի այգեգործական հողակտորում ինքնակամ իրականացրել է շինարարական աշխատանքներ և կառուցել բնակելի տուն, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Արուս Սեյրանի Սիրադեղյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Արուս Սեյրանի Սիրադեղյանին՝ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221106 հաշվին և օրենքով սահմանված կարգով օրինականացնելու ինքնակամ կառուցված շինությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» դեկտեմբերի 2018 թվականի N 502-Ա

ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՌԻՍԿԻ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 101-րդ կետով, հիմք ընդունելով Ջրվեժ համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 17-ի թիվ 19-Ա որոշմամբ հաստատված ներքին աուդիտի կանոնակարգի 29-րդ կետը, Ջրվեժի համայնքապետարանի ներքին աուդիտի կոմիտեի 2018 թվականի դեկտեմբերի 3-ի N 10/18 նիստի որոշումը, ***որոշում եմ.***

1.Հաստատել Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2019 թվականի ռիսկի երեք ընտրանքային չափորոշիչները՝ հետևյալ կազմով.

1) նշանակալիություն,

2) ֆինանսական ազդեցություն,

3) ստացված ֆինանսավորման չափ:

2.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Լևոն Հարությունյանի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«5» դեկտեմբերի 2018 թվականի N 503-Ա

ԻՆՔԱՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արուս Սեյրանի Սիրադեղյանի (ծնված՝ 1971 թվականի հունիսի 26-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 19-րդ թաղամասի թիվ 7 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03072018-07-0054, տրված 2018 թվականի հուլիսի 3-ին, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի նոյեմբերի 30-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արուս Սեյրանի Սիրադեղյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 19-րդ թաղամասի թիվ 7 հասցեի այգեգործական հողամասում 2018 թվականին ինքնակամ կառուցել է այգետնակ՝ 99,65 քառ.մետր, շինություն՝ 15,8 քառ.մետր և պարիապ՝ 1,85 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արուս Սեյրանի Սիրադեղյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 19-րդ թաղամասի թիվ 7 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Արուս Սեյրանի Սիրադեղյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 19-րդ թաղամասի թիվ 7 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 286 624 (երկու հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 5
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«5» դեկտեմբերի 2018 թվականի N 504-Ա

ՍՈՆԱ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՕՀԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 15-ի թիվ 9-Ա որոշումը և համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի 1-ին փակուղու թիվ 10/1 հասցեի բնակիչ Սոնա Չինաստանի Օհանյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ ընտանիքը բաղկացած է 5 անձից, ինքը և հարսը չեն աշխատում, ամուսինը՝ Յուրի Վլադիմիրի Կարապետյանը հանդիսանում է 3-րդ կարգի հաշմանդամ, չի աշխատում, տղան մահացել է 2017 թվականին, նրանց խնամքի տակ են 2 անչափահաս երեխաները՝ ծնված 2012 և 2013 թվականներին, ովքեր հանդիսանում են միակողմանի ծնողազուրկ, ընդ որում՝ 2012 թվականին ծնված Էլեն Արշակի Կարապետյանն ունի առողջական խնդիրներ և կարիք կա վիրահատության, և ելնելով ընտանիքի սոցիալական վիճակից Սոնա Չինաստանի Օհանյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Սոնա Չինաստանի Օհանյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. դեկտեմբերի 5
գ. Ջրվեժ